

ԱՆՑԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՑԱՅԾ ԵՐԳԵՐԻՑ

ԳԵՐՐԻ ԱՍՏԻՇԱՏՈՒՐՅԱՆ

«Եմէն մարդ չի կարդա ի՞ւ զիրքն՝ որիշ զըլե է,
«Բաւծիսթես ուստ շիմանաս՝ քաշով է, բայ ու կըլն է»

Պատերքուրզի կայսերական Գիտութեանց ձևամբանի վրաց
ձեռագիրների թւուու գոտուում է ի միջի այլց և մի ձեռագիրը
մատեան, որը մեր խորին ոշագրութեան արժանի պիտի լինիր.
Թա մեր ամենանշաշիկուած ժողովրական բանաստեղծ, վրաց Հե-
րակ Բ. թագաւորի երգի, Սայեաթ-Նովայի երգերի ժողովածուն
է, որը գրի է առել Սայեաթ-Նովայի որդի Օհանը Գիօրգի Ժի-
թագաւորի որդի թէյտուրաց արքայազնի պատուերու:

Ներկայում լաւ չեմ յիշում թէ ինչ ապրիւրից, միայն այս-
քանը յիշում եմ, որ ձեռագիրը տեսնելուց շատ տաք զիտեկի
արգեն նրա գոյութեան մասին Բայց զիտեցած ունմանափակ-
ւում էք նրանով, որ Գիտութեանց մենաբանում կայ մի վրացե-
րէն ձեռագիր Սայեաթ-Նովայի երգերի—ուրիշ ոչինչ. Թէ այդ
ձեռագիրը որքան մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում, այդ
ևս երեսակայել անգամ չեմ կարող Այսպատճի ևս 1892 թ. այցե-
լեցի Ասիսական Թանգարանը ոչ թէ այդ ձեռագիրը ուսումնասիր-
ելու նպատակով, այյ լոկ հետաքրքրութեանս յագուրդ տալու
համար. Եւ իսկապէս մի քանի աննպաստ հանգստանենքներ և զըլ-
խաւորագիս ժամանակի սղութիւնը ինձ չեմն էլ թոյլ տալ լրջո-
րէն հետազոտել ձեռագիրը: Ես ձեռքիս տակ չունեմ ոչ մի բա-
ռարան արեկելեան լեզուների, չունեմ մինչեւ անգամ Ալիքերգեա-
նի յայտնի «Սայեաթ-Նովայ», հրատարակութիւնը, որ ինձ անհա-
մեմատ մեծ ծառայութիւն պիտի արած լինէր այդ գէպըում:

Այնպէս որ մատեանի միջի անյայտ երգերը որոշելիս ես զեկավարուել եմ լոկ յիշողութիւնովս: Այդ շտապ աշխատութիւնն էր պատճառը, որ շատ հանգամանքներ, որ իսկապէս առաջնակարգ նշանակութիւն ունեն, բաց եմ թողել յիշատակարանս մոցնելու: օրինակ՝ բոլոր հայերէն, վրացերէն և թուրքերէն երգերի թիւը տառանձին-առանձին և ի միամին առած, ձեռքի (գրի) աւելի խորը ուսումնակիրութիւնը, երեսների քանակութիւնը և առասարակ ձևագրի մանրամասն նկարագրութիւնը և այլն:

Չայելով այդ աննպաստ հանգամանքներին, ես հետաքրքր քրութիւնս յագեցնելու համար, յիշատակարանիս մէջ մոցնում էի մեր անման երգչի անյայտ երգերը, ապազային թողնելով ձևագրի լուրջ ուսումնասիրութիւնը: Տարաբաղդարար ապագան աւելի աննպաստաւոր եղաւ, և ես մինչև հիմա միջոց չունեցայ կրկին տեսնելու այդ ձևագրիր:

Ներկայ նկատարութիւններս թուոցիկ տպաւորութիւնների արգիւնք են, որ ես վերականգնում եմ յիշողութեանս մէջ, նորից աշքի անցկացնելով իմ 1892 թ. յիշատակարանը. Այս տասը տարուայ ընթացքում չեղաւ մէկը, որ գրէր այդ Ակադեմիական հետաքրքիր ձևագրի մասին: Ես ինքը այլևս յանցանք եմ համարում լուել և ծանօթացնում եմ հասարակութեան իմ թէպէտն թուոցիկ ու վերջնական նշանակութիւն չունեցող, գիտազութիւնների հետ:

Սայեաթ-Նովայի այդ երգերի հաւաքածում գտնում է Գետերբուրգի Դիտութեանց ձեմարանի (Императорская Академия Наук): Ասիսկան Թանգարանում, վրաց ձևագրիների բարձում (Georgica №222). Արգեօք ինչ վերնազրով է նույնական գէպս զամբ անդայն վերնազրի է, որը ճշոփի չէ արտայայտում ձևագրի բովանդակութիւնը—ԵՅՈՐԻԿԻ ցրցանիկի ուսումնական կամ սրբանուն մի բան: Լաւ յիշում եմ, որ ցուցակում չէ յիշուած մինչև անդամ երգերի հեղինակի—Սայեաթ-Նովայի անունը: Գրի է առել այդ մատեանը 1823-ին (մատեանում մի առ նշանակուած է 23 մարտի 1823 թ.) Գետերբուրգում թէյմուրազ արքայազնի պատուէրով Սայեաթ-Նովայի որդի Նօվանէի ձևագրի որը իրան տեղ-տեղ ընդան Այժեագովէ է անուանում: Ահա ինչ է ասում մատեանի յիշատակարանը. «Ես նոցն եցեածըցը մշյուս ուս Ծցոթիւնուս առօն. եսօտենցոյն նյուղմա (Ոյօն Շնջած է) Օուանցմա զալիցիւ ուցն նշնին եւաւուցոյն լոյմայո ունի սենուցնաց» (Այս մատեանը պատկանում է Վրաստանի թագաւորի որդի թէյմուրազին, գրի առաւ Սայեաթ-Նովայի որդի Նօվանէն իր հայր Սայեաթ-Նովայի երգերը իրեն նրան յիշատակի):

Երկու խօսք այդ նօվմանէի մասին:

Հանգուցեալ Գէորգ Ախվերդեանի «Սայեաթ-Նովայ» յայտնի ուսումնասիրութեան առաջարանի ժմ. երեսում կարդում ենք հետևեալը.

«.... Սայեաթ-Նովէն լսելով Աղա-Մահմէդ-խանի հեծելազօրի Վրաստանի ասհմանին մօռնալը, միտոն է բերում զաւկներուն (ունեցել է երկու տղայ՝ Մելքիսեդ, Օհան և երկու աղջիկ՝ Սառա ու Մարիամ) ու գալիս է Թիֆլիզ հատեղաց ուղարկում է Նրանց Մօգովկ, ուր նրանք գտնում են հաստատ բնակութիւննա: Նոյն առաջարանից մենք իմանում ենք Մելքիսեդի մերունդի մասին, բայց Օհանի մասին ոչ մի խօսք չկայ այլևս: Մեր յիշատակած մատեանից առաջին անգամ երեսում է Օհանի (նոյնը՝ նօվմանէ և Բվան) գոյութիւնը Պետերբուրգում անցեալ զարի քանական թւականներին:

Օհանն այդ ժամանակ ծեր էր, Այդ բանը երեսում է նրանից, որ նրա մայրը մեռած էր արդէն 1769-ին (տես Ալիք. եր. մէ.), ներկան նա մտած պիտի լինէր վաթուներորդ տարին նա չէր կարողանում գրիչը հաստատ ձեռքին բռնել—այդ երեսում է նրա դոդդուն զրից: Նրա աշքերը լաւ չեն տեսնում, ինչպէս ապացուցանում է մատեանում ցրւած նրա նկատողութիւններից մէկը. Շօնից անտեսոյն ցը ըցնից, ճձնշճ ոյս թալլյ թանջու մը ձ՛ռ Յ՛նչու — առ նցյահցուց Խույզաց (լաւ չկարողացայ զրիլ այն պատճեռով, որ ինձ հրամայուած էր (արքայազն Թէյմուրազի կողմից) շուտով (զերջացնել): Միանի ես չեմ սուսում, որ ակնոցոց վաս էր):

Օհանը հասկանում էր Թիֆլիզի հայերէն, վրացիրէն ու գուցէ նոյնպէս թուքերէն բարբաները: Վրաստանից հեռանլուց յետոյ սովորել էր նոյնպէս և ուսւերէնը ոչ-հիմնաւորապէս: Զուրի էր հօր տաղանդից և առնասարակ նրա մտաւոր պատրաստութիւնից, թէպէտ և բռամկան ծանօթ է երեսում աշուղական լիզութին և արուեստանի և մինչև անգամ յաւակնութիւն ունի իրան բանաստեղծ երեսակայելու: Նա հօր երգերին կցել է մատեանի վերջում իր յօրինած ուռւերէն լիզունվ խաղեր՝ յարմարեցրած արեկեան (աշուղական) տաղալափութեան: Այս սոտանաւորները զրուած են անգրագիտութիւն և զուրկ են որևէ զրական արժանաւորութիւնից: Այսպանը մատեանի զրոզի մասին:

Արգեօք այդ երգերը Սայեաթ-Նովային են պատկանում:

Թողնելով մի կողմ այն հանգամաները, որ մատեանը կեղծիքի ոչ մի առիթ չէ տալիս, ուսանաւորների լիզուն, նրանց կազմուածքը, Սայեաթ-Նովայի սիրած շատ բառեր ու գարձուածքներ ուղղակի մատնում են մեր անման երգին: Այսպէս կարող

Էր գրել միտայն Սայհեաթ-Նովան, որին կարելի է ճանաչել նրա մի տունից: Էլ չեմ խօսում այն բանի մասին, որ մատեանի մէջ մոռած են ամրութովին այնպիսի երգեր, որոնք առաջուց յայտնի են իրեն Սայհեաթ-Նովայի սեփականութիւն:

Խ՞նչ աղբիւր է ծառայել Օ՛հանին հօր երգերը գրի առնելիս:

Այս հարցին կարելի է միտայն մի որոշ պատասխան տալ, որ Օ՛հանի և Ախվերդեանի աղբիւրները մինենայնը չեն եղել, այսինքն Սայհեաթ-Նովայի յայտնի ձեռագիրը: Պատճառը այն մնե տարրերութիւնն է, որ կոյ երկու ձեռագրներում եթէ ընդունենք մինչև անդամ, որ Ակագեմիական ձեռագրում մատած մինչև այժմ անյայտ երգերը տեղաւորուած էին բնագրի այն մասներում, որոնք պակառառու էին նրա Ախվերդեանի ձեռքն ընկած միջոցին, այնուամենայնիւ շատ հանգամանքներ տալիս են ենթադրելու, որ յայտնի բնագիրը չէ ծառայել Օ՛հանին իրքն աղբիւր: Դրա համար հարկաւոր է միտայն վերցնել թէկուք մի երգ Օ՛հանի ձեռագրից և համեմատել նոյն ժիաղից հետ Ախվերդեանի հրատարակութիւնից: Եւ իսկոյն կը պարզուի հետեւալը՝ տառերի զանազան քանակութիւնը, տազերի կարգը, շատ բառերի ու գարձուածների տարրերութիւնը, էլ չեմ խօսում երգերի զանազան կարգի մասին երկու աշխատութիւններում և վերջապէս վրացերէն երգերի բացակայութիւնը բնագրից: Մնում է ենթադրելու, որ Օ՛հանին իրքն աղբիւր ծառայել է կամ յիշողութիւնը, կամ, որ նու ձեռքի տակ ունեցել է մի այլ ձեռագիր աղբիւր, զուցէ զրած հէնց Սայհեաթ-Նովայի ձեռքով: Առաջի ենթագրութիւնը, չը կարելի բոլորովին ժխտել: Պէտք է ի նկատի ունենալ այն բացարկի յիշողութիւնը, որը ունեցել են մեր պապերն ու հայրերը և ունեն հասարակ ժողովրդից շատերը դեռ մինչև հիմա գէպի իրանց սիրած աշակերդի ժխտերը և տառարակ ժողովրդի բացական երգերը: Օ՛հանը, երբ որ թիֆլիզից հեռացաւ, մօտ երեսուն ատրեկան էր, եթէ ոչ աւելի: Ուրեմն թիֆլիզում նու կարող էր լսած լինել հօրից կամ ուրիշ շատերից Սայհեաթ-Նովայի երգերը և յիշողութեան մէջ պահել: Վերջապէս նու Մօղջոկում եղած ժամանակ կարող էր կարդալ հօր բնագիրը ու մոքում պահել շատ երգեր և յետոյ քսանական թւականներին վերականել յիշողութեան մէջ և զրի առնել Պետերբուրգում: Գուցէ այս հանգամանքին ենք պարտական, որ Օ՛հանն իրան թոյլ է տուել բաւականին ազատ խմբագրութիւն հօր երգերի վերաբերեալ: Գրաւոր աղբիւր ձեռքի տակ ունենալին նու բաւականին առնձուած պիտի լինէր: Այդ յիշողութիւնը չէ արգէօք, որ նրան շատ անգամ գաւաճանել է: օրինակ՝ Օ՛հանը շատ անգամ չէ յիշում

երգը ամբողջապէս (համեմատած Ախվերդեանի հրատարակածի հետ), այլ միայն նրա մի քանի տուները, և վերջապէս չե՛ որ նա գրի է անցրել երգերի մի աննշան մասը Սայեաթ-Նովայի բոլոր երկերի հետ համեմատած։ Ցամենայն դէպո այս հարցը կարող է պարզել մատեանի խորին ուսումնասիրութիւնը։ Կարող է պատահել որ Օհանը բացի իր յիշողութիւնից, ձեռքի տակ է ունեցել որին գրաւոր ազդիւր։

Մատեանը երկածալ է, բաւականին հաստ երեսներին դրսուած են համարներ, բայց ոչ Օհանի ձեռքով։ Մատեանի բովանդակութեան մեծ մասը կազմում են Սայեաթ-Նովայի երգերը, իսկ վերջին, աւելի աննշան մասը Օհանի ուսուերէն լեզուով յօրինած այլանդակ ժխաղերէ։

Սայեաթ-Նովայի երգերից առաջ գալիս են թուրքերէն, յետոյ վրացերէն և ապա հայերէնները։ Արագ աչքի անցկացնելով այդ երգերը, կարելի է գալ հետևեալ եզրակացութեան։

Վրացերէն երգերը պարզ են և անպաճոյն, զրուած են զըլիաւրապէս յանկարծուատ, որեւէ դէպքի առիթով և կազ ունեն հեղինակի կեանոքի հետ, ուրեմն և կարող են ծառայել իրեւ կենդանի աղքիւր Սայեաթ-Նովայի կենասպրութեան (յօդուածիս վերջում մէջ կը բերեմ մի օրինակ)։

Հայերէն երգերը, ընդհակառակն, հեղինակի առանձին հոգածքի ու զրազմունքի նիւթ են եղել երեսւմ է, որ նրանց վրա հեղինակը աշխատելի է, սիրու է մաշել և նրանց տալիս է առանձին նշանակութիւն։ Նրանք նրան հասուն մաքի արտայայտութիւններն են և անհամեմատ աւելի կոկուած։

Սայեաթ-Նովան իսկապէս հայերէն երգերով էր, որ յետագայ բազմաթիւ աշուղների համար շփուա ստեղծեց։ Թուրքերէն երգերը իմ կարծիքով աւելի երկրորդական նշանակութիւն պէտք է ունենան։ Տեղը և հանդամանքները թոյլ չեն տուել Սայեաթ-Նովային լաւ առփարելու այդ լիզուն և եթէ նա զրել է թուրքերէն մեծ քանակութեամբ երգեր, այդ միայն նրա համար, որպէս զի ժամանակի առուրքը վճարէ և յետ չը մնայ ժամանակակից յայտնի աշուղներից։ Սրանք նրա երիտասարք ժամանակուայ արդիւնքները, իսկապէս, փորձերը պիտի լինեն, երբ Սայեաթ-Նովան դեռ չէր գուրը եկել ինքնուրոյնութեան ճանապարհը։

Մատեանի կարգալը ներկայացնուած է գժուարութիւնները Գուցէ մասամբ այս հանդամանքն է եղել պատճառը, որ ումանք գիտենալով նրա գոյութեան մասին, այնուամենայինիւ ձեռք չեն զարգել նրա ուսումնասիրութեան։ Ուսումնասիրողը պէտք է ծանօթ լինի ոչ թէ միայն թիֆլիզի հայերէն, վրացերէն և թուր-

քերէն բարբառների հետ, այլ և աշուղական լեզուի, արուեստի հետ: Ձևագիրը բառացի կարգալով հետեւների չի կարելի հասնել: Պէտք է կարգալ աւելի զուշակելով, սրբագրելով: Այս ևս պէտք է ի նկատի ունենալ, որ վրաց դիրը չի կարողանում արտայայտել հայ և թուրք լեզուների հաջիւնները և որ այդ երգերի զրի առնողը կրթութիւնից գուրելի և կիսագրագէտ մարդ էր: Օհանուր շատ անգամ չըրմանելով հօր գործածած շատ բառեր և զարձուածքները, մէջ է բերում նրանց վայրիվերոյ և շատ տեղ միթնացնում և ազաւացնում է բնագիրը: Շատ անգեր ևս կարգացի աւելի ննթագրելով, քան թէ կարելի է տառ առ տառ գուրս բերել ձեռագրից: Յիշատակարանում նրանք մանում էին աւելի ուզգուած, սրբագրած, Բայց ի նկատի ունենալով այն, որ ես միշնոց և ժամանակ չիմ ունեցել լիովին ուսումնասիրելու: Ձեռագիրը, իմ ընթերցումը չը պէտք է համարել բոլորովին անթերի և վերջնական:

Սայեաթ-Նովայի բոլոր երգերը գրուած են վրացերէն սղագիր, իրար կազուած տառերով: Ձեռքը վարժ է, թէպէտ անհաստատա և տեղ-տեղ գողդոջուն: Յիշատակարանին մէջ ևս արտանկարած ունեմ Օհանի ձեռքից օրինակներ, որ ես աւելորդ եմ համարում մէջ բերել իմ թուոցիկ նկատողութիւններիս մէջ:

Հայերէն երգերը 28 հատ են, որոնցից երկուոք խառն ուրիշ լեզուների հետ: Սրանցից մինչև այժմ յայտնի են 18-ը, որոնք մտած են Ալավերդեանի հաւաքածուի մէջ: Տասը, որոնց թւում և բազմակազ ոտանաւորները, բոլորովին անյայտ են:

Երգերը վեջանում են բացարութիւններով, որոնք ցոյց են տալիս երգի ձեռ, հզանակը, ցըց լցիւնան, ցըց ոցշնօնուք... (այս մուխամբրազ, այս թէխիս...)

Երգերին կից երեւմնագէտ գրուած են Օհանի վրացերէն լեզուով բաւականին հետաքրքիր բացարութիւն-ծանօթութիւնները: Օրինակ՝ իմ բերած երրորդ («Ե՞յ բէմուրազ մի սպանին») երգին կից գրուած է հետեւել ժանօթութիւնը (մէջ եմ բերում ուզգակի հայերէն թարգմանութիւնը). «Սա միքանի լուս եղանակներով է ասել Սայեաթ-Նովան: Այս խեղճն էլ (Սայեաթ-Նովան) սիրոց բանուած՝ ճարտասանի լեզու է գործ գրել և ծանր մաքի մէջ խորասուզուել, որովհետեւ այդպէտ է աշխարհը—ունայն պիտի անցնի: Ով որ սրա (այս մատենանը) կարդալու միտք ունենաբ, մի-մի ողորմի ասացէք ողորմելուն (Սայեաթ-Նովային) և յիշեցէք ձեր նուաստ ճորտ՝ տարարագդ իվան Սէյեագովիննէ: «Մօռթ նստաղըն կու հարփին (Ալավ. և Գ.) երգին կից. «Սայեաթ-Նովան մի ազիղ անուանի բարեկամ է ունեցել, այս քով-

լաման (երգի եղանակ) նրա վրա է ասելու իմ այս տեղ բերած չորրորդ (չնարար զընաց բուլբուլի մօտ) երգին կից- շայս մուխամբազը (երգի եղանակ) Սայհաթ-Նովան յօրինեց, որ Շահը (Ազա-Մահմադ-խանը) պէտք է գայ մեծ ժիռորով նրա զերեզմանի վրայ. այս էր պատճառը, որ նրան մաս-մաս արին... Օհան ուղում է ասել, թէ Սայհաթ-Նովան այս երգով զուշակի էր, թէ ինչ մահով պիտի մեռնի (երգի վերջին մասը հետևեալն է. «Սայհաթ-Նովի գերեզմանըն Շահ-Արտսի լալի նըման շահի պէտ զալուն մեռմ է»):

Հայ յայմանի երգերի ցանկը. Վերնագիրներին կից գրուած հայկական թւանշանները ցոյց են տալիս թէ նրանք Ախվերդիանի հրատարակած որ խաղին են համապատասխանութեաւ:

1. Շատ մարթ կօսէ շիս յարէմէն համրաթ իմ (ԺԲ)
 2. Թիգ սաղ զուրա ալ շւմաշըն, նազանի (ԽԵ)
 3. Թանի վուր ջան իմ, յի քիզ շուրբան իմ (ԽԲ)
 4. Եշխիցըթ հիփանդացիլ իմ, դիղի համա իմ լալի (ԽԲ)
 5. Զիս ասում թէ լացի էլի (ԺԵ)
 6. Աշխարըս մէկ փանջարա է, թազէրէմէն բէզարիլ իմ (ՂԵ)
 7. Դուռ շատուցվէ իմաստուն իս (Ը)
 8. Հուտըթ աշխարըս մակլից (ԽԱ)
 9. Անգին ակըն վըրէթ շարած (ԽԱ)
 10. Թամաց աշխար պըտուտ էկա (ԽԵ)
 11. Պատկիրըթ շալամօվ քաշած (ԼԵ)
 12. Բէգասլին վուր խօսէցնիս (ԼԵ)
 13. Մէ խօսկ ունիմ իլթիմազօվ (Ե)
 14. Աջափ, քու սիրտըն ով շինից (ԽԸ)
 15. Մողըթ նստողըն կու հարփի (ԽԻ.)
 16. Մէջլումի պէտ կօրաւ հարըս (Զ)
 17. Ամէն սազի մէշըն զօված (Ա)
 18. Արի համով շուլուտ արա (ԽԲ)
- Մի ժողորիկ նկատողութիւնն Վերեւ յիշատակուած 18 երգերից 16-ը Ախվերդիանի մօտ ունեն թւականներ, երկուուր միայն շունեն:

Անյայտ երգերը որանք են.

1. Աիրիմըն կարթացիլ իմ դասէ դաս.
2. Աիր Աստուած սիրիս, բէն բարի կացի.
3. Ժահրատըն մէրած, Շիրին ասաց ¹⁾.

¹⁾ Եր առզ յիշատակաթիւնի մէջ բուլբուլին ոչնշացրած է. նեմ ազբաւմ եմ, որ այսուղ պիտի լինի «Փահքազն մէրած» երգը, որը ցանկին մէջ ուրիշ անց չէր լիշտաւ:

4. ԷՇ թէմուրադ մի սըպանի.
5. Հնողկաց քաղաքիցըն հանած.
6. Աչկ ու ունքըթ վէր իս թօղի.
7. Խարար գնաց բռւլրուկի մօտ.
8. Մշու Սուլթան սուրփ կարապիտ (հայերէն և թուրքերէն).
9. Մտա էշինի քուրիչն խալիս գարնալու.
10. Իս բա միջիգոյ (հայերէն, վրացերէն, թուրքերէն).

Այսպիսի մնձ քանակութիւն անյայտ երգերի, որ երեսում է յանկարծ մի անծանոթ մտահանից, ենթազրել է տալիս, որ Ախմետիկանի ձեռ քն անցած ժամավարը շատ կիսատ պիտի լինէր, ինձ թւում է, թէ հետաքրքրուող մինչեւ այժմ էլ կարող է զանել հուց մնացած ժամավարը բարուում մեր ժողովրդի սիրած երգչի անյայտ խողերից, Մրան ապացոյց կարող է լինել հանգուցեալ Դէր-Ազգեանողուեանի ժթիվիսեցոց մտաւոր կեանքից մէջ մոցրած Սայեաթ-Նովայի երկու բաւկանին աղաւադուած խաղերը¹⁾:

Ես կարծում էի թէ յայտնի երգերի թւականները ինձ պարզել կաան, թէ հեղինակի կեանքի մի որոշ ժամանակամիջոցին հն վերաբերում ինձ հետաքրքրող մատեանի - բոլոր երգերը Բայց այդ չախզուեց, որովհետ թւականները բանում հն համարեա այն ամբողջ ժամանակամիջոցը, երբ Սայեաթ-Նովան դրելիս է եղել հայերէն:

Այստեղ մէջ եմ բերում բոլոր անյայտ երգերն այնպէս, ինչպէս ես կարգում եմ:²⁾

1) Հօրս թողած ձեռագիրների մէջ ես զայ ի միջի այլոց Սայեաթ-Նովայի մի քանի ստանուացները, որնցից երկուուց հոյերէն. մէջ յայտնի վնչեց էնզւուր չէ ցամաքում, որին մէշչեն արօն մընաց և միւս անյայտ՝ «Եշիկիթ կըտին պրտի մէշչեն գոր է»,

2) Հարազատ պահպանելու համար Թիֆլիսի բարբառի ոյն հնչինները, որնք հանդիպում են այսուհետ ըերած երգերի մէջ և որոնց չէ կարպանում արտայայտել հարական զից, ես զեկովաբուն եմ հնահեալ Փախոցբաթեամբ (transcription)

1) Պ հայր (Դ) համապատասխանում է զբաց չ արարուկան Յ հնչիեինն Օրինակ՝ «Վար, աշարիք»:

2) Ա հայր (Ա) արտայայտում է ոչ-վանկային կամ բազումայի (ԱՆՁՈՂՈՎՈՅԵ) առ Օք. «Անուանա, էլք-առ իմ» (բայց ոչ Անուանա)

3) որովհներ մեր չ առաջ երկայսւում կարցին է իր իսկական, նախնական եւանակաւթիւնը բառի պիտում, ես զբա անդ զարծ եմ ածում, չ առաջարիւմ եմ կարգալ իր եաբնական եղանակաթեամբ, ոյսինքն ինչպէս լատինական յէ Թիրնակ զբաւ եմ պար, չիս, և պար, յիս:

I

Աչկ ու ունքըթ վէր իս թօղի, հէքիմըթ անձարի բարաթ.
Աջամփ, քիզ թնչ գէթ իմ տրի—խօսում իս զու չարի բարաթ.
Օգօր քիզ խայէն մըտիկ տա, սիրացն դարնա քարի բարաթ.
Թէգուզ պահէ, թէգուզ սպանէ զըրանըթ նօքարի բարաթ:

Դըրանըթ նօքար չիս պահի, թաքառուր իս՝ շուլ ոըպանօդ.
Խօսկըս արակօզ իմացի, զօնրա աստղ, փուզուլ սըպանօդ.
Բացուիլ իս բազի միջումըն, կարմիր վարթ, բուլըռուլ սըպանօդ:
Կտրիլ տու քանի կտրում է—քու թուրըն սարդարի բարաթ:

յար, ինձ մէ ճայիքա կանզնէցըրու—կէնամ խաթըրջամի նըման։
Դիշիր ու ցէրէկ լալիս իմ, աշկիրը է նամի նըման։
Թօդ զըրանըթ նընզած ըլիմ օտար բարէկամի նըման։
Անզալըն Աստուած սըպանէ, Փահրադ Շիրին շարի բարաթ։

Գարնան շնչի ծախիկի նըման կարմիր վարթըն բաց է ըլում։
Ի՞նչ օրուու է քու բազմընչուն, վուր բուլըռուլըն լաց է ըլում։
Պըրօչէմէթ միզր է կաթում, թօդիս, յախէթ թաց է ըլում,
ինդուր համա բալիցը իս խօսում—լիզութ է շաբարի բարաթ։

Մարթ իր խօսկօզ կու ճանանչուի, գուզէ Շահի վէզիր շինին.
Բէգասլըն ասըլ չի դարնա, թէգուզ վէքիլ, նազիր շինին։
Թէ կու մընամ, ամինամ տիղ քու հունարըն հազիր շինին։
Սայաթ-Նօվմ, խօսկըթ ասա—լըլի քամու դարի բարաթ։

II

Հընդկաց քաղաքիցըն հանած, ջավահիր քար արմանէլու,
Ի՞նչին դիփչիս նաւըշ կօնիս, զօնկէ ֆարգալ արմանէլու։
Ամէն մարթ չի կարա ճարի շահօզ շրբար արմանէլու։
Մարթ հիդըթ չի կարօզ խօսի, թօսումի Զալ արմանէլու։

որ կառզ էր սիսլմար կարզացնել char, hisse: Թառիկ մէջ տեղ թօզնում եմ
յ անփոփոխ: Օք. «Ճայիս», «Մայթ-Նօվմ»:

4) Խօսր ամ. ըժ., (և շ.՝) անդային ձայնաւորներ են, հոմազառա-
խան ֆրանսիական առ. առ.... Օք. «Ճայրա», «Շըրուր»:

Եկմատի ծար բըհամ էկար, շնաքըթ տաշիլըն թնչ կօնէ.
կրանի է քու տիրուշին—շաղին շաշիլըն թնչ կօնէ.
երէսըթ խասա մուրասա—շալամ քաշիլըն թնչ կօնէ.
Կարմիր ու կանանչ ու ճէրմակ, սարիսար ալ արմանէլու.

Դուն հիշտ շիմիշ անէլու յիս, ճըրաք վարած, դըժար ճարած.
Օգօր երէսըթ կու տէնէ, խիլըն կու զարնա ըրվարած.
Անդին շաշութ, անդին ալմաս, բօլորքըթ ջավանիր շարած,
Ականդարի Զուլգարէն թօղած, թընաղ հէքալ արմանէլու.

Համաշա սէյրան իս անում, վարթ ու մանիշակ քաղում իս.
Շուշա բըրօէ գուլարգան բէրնէթ վարթաջուր մազում իս.
Թարառորի թայի ջիգա, վօսկէ թիլըդ շաղմազում իս.
Վուրմուրթի ճէրիցըն փախած ջէյրան, մարալ արմանէլու.

շար, քիզանից հիբանալըս մէրնէլուս վըրա դըժար ա.
Լշանէմէթ ջունուն իմ գարի—թնչպէս անիմ ինձի շարա.
Ազէլի չէ Սայաթ-Նովին—քիզի ծարա ու նաքար ա.
Նըրանից Ճէրիցըթ քաշիլըն էտ էլ շատ ա արմանէլու.

III

ԷՇ բէմուրագ մի սըզանի, չունիրի արիր սէր, նազանի.
Թէ քիզ ազէլ յագ յար սիրիմ, ումրրէս չանիմ խէր, նա-
զանի.
Աշխարումըս զուն իմ ջան իս,
Դուն իմ Շան իս, Սուլթան, Խան իս.
Ի՞նչ կուլի միզ մըտիկ անիս.
Հաղարէն մէ ջէր, նազանի.

Յարիր գազրիշ իմ, հաջ չունիմ.
Գլիքիս էրծաթէ թաջ չունիմ.
Ճիս քիզ ազէլ իրաջ չունիմ.
Դուն գարի ինձ տէր, նազանի.

Կըրակ աըզիր կրակն ազէլի.
Զախմախ ունիս զուն ցաղէլի.
Աշխարում քիզնից ազէլի
Օ՞վ ասավ թէ կէր, նազանի.

Սալաթ-Նօվին իմ, ճար չունիմ,
իմ վարթըն իմ մին խար չունիմ,
թէ դուն ասիր շադ շար չունիմ,
իղարքը գըթար, նազանի:

IV

Խարար գընաց բուլրուլի մօդ «վարթըն քու գալուն մընում է,
մուխկընիրըն բացբացըրած վէրէն շուր գալուն մընում է.
Արավուտուց զանգակի պէս քախցըր ձէն տալուն մընում է»:
Բուլրուլն ասաց. «Չիմ կարող գա, պունպումէս լալուն մընում է»:

Վարթըն ասաց. «Իմ բուլրուլն ալ պունպումէն վժւնց կու խափէ,
թէ իիլք ունիս, արիբ բուլրուլ, էլ քու բազի հնչիքն չափէ»:
Քանի գուգէ բընած տիղըն իր թշնամին կուրըն կապէ,
ելի վիրչում մէդան (?) ¹⁾ մօսաօմի Զալին մընում է»:

Վարթըն ասաց. «Խային բուլրուլ, նալաթ էտ քու էթափիրարին,
Անցկացաւ ապրիլ, մայիսին, մէկ օր չը հարցըրիր արին»:
Չէթուղ թէ մուրազին համին, տիս, ինչ արավ քավթար շարին,
Փահրազին քլունգըն սըպանից, Շիրին խանջալին մընում է»:

Աշխարռումըն վարթին է էլի բուլրուլն էրի սիրէկանըն:
Բուլրուլի լիգո-ով իմ ասում, Տէր, պահէ վարթի նըմանըն:
Աշխարռումը քանի սադ իմ, Սայաթ-Նօվի գէրէզմանըն
Շահարասի լալի նըման շահի վէր գալուն մընում է»:

V

Փահրազըն մէրած, Շիրին ասաց՝ շարէն էրա-ած իմ.
Քաշ-իլ է վարթըն, մօդ չէ թօգնում, չափորէն էրա-ած իմ,
Բուլրուլին ասաց՝ «վարթիս խաթրի խարէն էրա-ած իմ»:
Տամնումէկ ամիս մուշամ կացի, տարէն էրա-ած իմ.

¹⁾ Ենքնինելի բառերը են յիշասակարանիս մէջ սովորաբ որոտնիւր բառ էի:

Աստուած կռւ սիրիս, զար մի հաքնի, զարէն էրւած իմ,
Մէջլումի նըման ման իմ գալի, յարէն էրւած իմ:

Զըկո Փաշահի խազինումըն մալ քիզի լայիդ.
Հովա չեն գործի թիրամնումըն շալ քիզի լայիդ.
Օսկէ մատնումըթ գուն զըրի իս լալ քիզի լայիդ.
Հորիլիս առլաս, բանզն է գուլզազ ալ քիզի լայիդ.
Աստուած կռւ սիրիս, զար մի հաքնի, զարէն էրւած իմ,
Մէջլումի նըման մանիմ գալի, յարէն էրւած իմ:

Խօսկիրըթ քախցըթ, լիգութ շաքար շարթի միշումըն,
Գարունքուան ծաղիկ, բացիս էլի մարտի միշումըն.
Մազիրըթ րէհան, փաթըթամ է վարթի միշումըն.
Կանանչ աէրէպէն նամ չի կաթի վարթի միշումըն.
Աստուած կռւ սիրիս՝ զար մի հաքնի, զարէն էրւած իմ,
Մէջլումի նըման ման իմ գալիս, յարէն էրւած իմ:

Սոյաթ-Նօվէն իմ, էնզուը կռւլամ, զարդիրս արրար.
Մազիրըթ րէհան, կլազիտօն է, հուսիրըթ շարրար,
Բարակ սուրաթիթ խիստ սազ զուքա զիրա ու զարրար 1)...
Աստուած կռւ սիրիս, զար մի հաքնի, զարէն էրւած իմ,
Մէջլումի նըման ման իմ գալի յարէն էրւած իմ:

VI

Այրըն Աստուած սիրիս, բէն բարի կացի,
Գիմ զազաթիթ արա զա ու այր թօ:
Էլ էրանի չըկա զա զալում մարթուն.
Ընթ էրէսիթ զի թօ ու այր թօ:

Ճէ ժամանակ հասալ աչկէրիս լալու,
Ին ինձի զըցէցիր զարդըս վուխալու.
Լին լալով իմ էս աշխարըս մնալու,
Էնզուը նախ քաշէցի իսէ ու այր թօ:

1) Եյս վերջին տակ մէն, ինչպէս երկում է, պակասում է ճի ոմքով տող:

Սա ծօվումն մընաց, դուռ չէկաւ նավը,
Կէն կամօվ ավելցրի՛ քու սրտի ցավը.
Հօ համան կանչում իս ձա ձայնօվ դավը,
Ղաթ շաբուկ կաց ճարիս....*)

Իէ բուռ ցօ ցամքիլ է, հիւն հունար ունէ,
Փիւր փակէցին դուրըն, թէ շըքար ունէ,
Եվ օ ֆէն կարթաւու Աստուած ճար ունէ,
Հալալ Սայաթ-Նօվէն կէն ու այր թօ:

VII

Այրիմըն կարթացիլ իմ դասէդաս,
Հասա բաէ, հասա ջէ, հասա սէ,
Անգըծծակի մէ էն էկաւ դասէդաս,
Անգան կալա, չիմացա ինչ հասաս է:

Հազար տարին մարթու աչկին թաք առւր,
Թանի՛ տընագ, քանի՛ հարուստ, թաքառւր,
Զի հարցընի ախկատ, հարուստ թաքառւր,
Մահըն վուր կա, արանց կըշիրք հասաս է:

Դարնացաւ, ավէլցավ, կինքա ծօվացավ,
Ախ քաշէլէն սիրուս նըգավ, ծօվացավ,
Կաթէլօվ, կաթէլօվ դարզըն ծօվացավ,
Մէ մարթ չըկա, վուր ինձ խըրաս հասասէ:

Հազար տարին մարթու աչկին քարա սուն,
Օ՞վ է մնացի աշխարումը քար ասուն,
Սայաթ-Նօվա, տարիթ էլաւ քարտսուն,
Դուռ մահի հիդ, մահ քիզի հիդ հասաս է:

*) Բառնուրի կարմը ցոյց է առիս, որ այսուհետ պակասում է մի ամրագի առն, եթէ ոչ առնի:

VIII

Մըսա էջիսի քուրէն խալիս դարնալու,
Սիրալս էլաւ քէ ու այր, էրկու բէն.
Կամազ.... մաս դարդըն բարնալու,
Ո՞ւմ բըրնիմ սէ ու այր էրկու բէն:

Դազա պիտի խօսկըն շագամի չինէ,
Շարքարի միջումըն սամթիլ չինէ,

Մարթ վուր ըլի նու այր էրկու բէն:

Ինչպէս վուր կրակին չի դիմանամ մում,
Էնոքէս սաւամթ ըլի, օփօր խօսի հում.
Սայաթ-Նովին սասաց էնգուր չէ պակսում
Էրկու աշկէս էրկու այր էրկու բէն:

I

Սայանի երգերից ես ընդօրինակել ևմ տապէն պատահած
երեր երգը: Նրանց վրա գաղտփար տալու համար՝ ես մէջ եմ բերում մէկը ամբողջավիճ, իսկ միւսներից վարիանաներ և նրանց հետ
զուգահեռարար՝ Սայաթ-Նովիցի բնազրի համապատասխան անդերը համեմատութեան համար:

Սայեամթ Նովայի բնազրի (ըստ Ախվերդեանի լեռ Խազը) ¹⁾:

Պատկիրքրդ շալամօզ քաշած, թահրըդ սանգէ սանգ իս անում.
Էրէսիդ խալըն ծածկում է մազիրըդ, խափանդ իս անում.
Բացիի իս կարմիր վարթի պէս, բըլըռուկի հիգ հանդ իս անում.
Ակուքըդ սկսումըն շարած, պըսօշըդ մահանդ իս անում:

Էրէսրդ նուր լուսնի նըման՝ քանի կէնա կու բօլըրպի.
Դաստամազրդ նամ չի ուզի, առանց հուսիլ կու օլըրպի.

¹⁾ Ախվերդեանի սկզբանի իւր թօնեամ եմ անփափօ:

Ենդու համա քու տէսնօղըն իր ձամփէմէն կու մօլըրպի.
Եփ մըտնում իս մէջիսումըն, շանգ շուխի շարանդ իս անում:

Երէսըդ տէսնէլու գու քան քաղաք քաղկօվ, զիդ զիդի պէս.
Մենանօղըն քիզմօվ կու առնէ անմանական զիդ, զիդի պէս.
Եփ տիզէմէդ ժաժ իս գալի, շըխշըխկում իս յիզչիզի պէս.
Ի՞նչ կօնիս սանթուր, քամանչէն, զուքըթ չօնդուր, չանդ իս
անում:

Սուցիդ մէշըն վարթ, մանիշակ, սըմբուլ ու սուսան իս շինի.
Քու տէրըն բաղըն ի՞նչ կօնէ, քու հուսոն ոէհան իս շինի.
Քամին մէշըն անց է կէնում մազիբըդ ելքան իս շինի.
Աշխարքըն ծօվ, զուն մէշըն նավ, ման իս գալի, լանդ իս անում:

Տասնէմէդ մէկըն չին ասի՝ թէգուղ աշխարըս քիզ զօվին.
* * * * * մանիշակ բաց արտօծ ծօվին.
Բառ քու էշին վմաց դիմանամ, չուրըն տանէ Սայրեաթ-
նօվին,
Թէ տէսնօղըդ մէկ էլ տեսաւ, զիվանա գարանդ իս անում:

Ակագեմիական ձեռագիր.

Պատկիրքըթ շալամօվ քաշած, թաճըթ բանդէ բանդ իս անում.
Երէսիթ խալըն ծախկում է, մազիբըթ օցի հանդ իս անում.
Բաց իս էլի՝ կարմրը վարթ իս, բուլըրուի հիզ հանդ իս անում.
Ակրիբըթ սոկումըն շարած, պըբոշըթ մահանդ իս անում:

Հար, քու ծուցըն վարթ, մանիշակ, սըմբուլ ու սուսան իս շինի.
Քու տէրըն բաղըն ի՞նչ կօնէ, քու հուսոն թէհան իս շինի.
Քամին մէշըն անց է կէնում, մազիբըթ յէլքան իս շինի.
Աշխարըս ծօվ, զուն մէշըն նավ, ման իս գալի, լանդ իս անում:

Թարիփըթ օչօվ չի ասի—քաղաք քախկօվ, զիդ զիդի պէս,
Մէրնօղըն քիզնից կու արնէ անմանական զիդ, զիդի պէս.
Եփ խաղում իս, պառուտ գալիս շըխշըխկում իս յիզչիզի պէս.
Ի՞նչ կօնիս սանթուր, քամանչէն—զուքըթ չօնդուր, չանդ իս
անում:

Տամնէմին մէկըն չին ասի, թէդուզ աշխարքս քիզ դօվին.
Նունուգիար, ծաղիկ ծիրանի, մանիշակ բաց արած հօգին.
Բայ քու սիրան վանց զիմանա—ջուրըն տանէ Սայեմթ-Նօվին,
թէ տէսնօղը մէկ էլ տէսնէ զիմանա ու բանդ իս անում:

II

Սայեմթ-Նօվայի բնագիր (ԽՌ խաղի զիրջին երկու տուները).

Թէդուզ իմացի, կարթացի իմաստնասիրաց առակըն,
Էշխէմէդ ջունուն իմ էլի, վէր էկաւ ոըրտիս վարակըն,
Աստուած վկայ, մարթ չըքաշէ՝ դըժար է էշխի կըրակըն,
Տէսայ արտնուու ջէյրանըն՝ վուրսնուրթին զէնից բէդամազ:

Անց կացաւ աշու խաղալ է ուզում,
Հասաւ գարունքան հուսանըն բըլ
Սայեմթ-Նօվին տունց նընզիր ճիւտըն գ
. կորցրած խօնթկարի պէս նըստաւ

Ակադեմիական ձեռագիր՝

Գուցիս իմացի, կարթացի իմաստնաց սիրօվ արակըն.
Ախ քաշէմէն սիրարս էրուից, վէրացաւ ոըրտիս վարացըն,
Աստուած վրկա, մարթ չը քաշէ՝ դըժար է էշխի կըրակըն,
Տէսայ արտնու. ջէյրանըն վուրսնուրթի միզնից բէդամազ:

Հասավ գարունքաւ հուսանըն, բուլըրունիրըն զալ է ուզում.
Կորցիր ու գուրցազա հաքի սարիակըն խաղալ է ուզում.
Սայեմթ-Նօվին արանց նընզիր, վիզըն զըցած լալ է ուզում,
Զարըն կոտրած խօնթքարի պէս նըստած է խազնից բէ-
զամազ:

III

Սայեմթ-Նօվայի բնագիր (ԺԴ խաղի Դ տունը).

Տէսնօղըն նախաշըդ կու՝ արնդուէ էն . . . բուլի պէս.
Զընի տակէն նուր զուս էկած, արիզ զիբած սըմբուլի պէս.

Թուղ վըրէդ լալօվ պըտուտ գամ, վարթի կարօտ բուլըուլի պէս,
Դուն ինձնից շուտօվ մի թըռչի՝ շավարդան, բազայ իս աղիզ:

Ակադեմիական ձեռագիր.

Տէմնօղըն թահրըթ կու տընդդէ, փարչէվանդի բշրուլի պէս,
Ջընի տակէն նուր դուս էկած, արիվ զիրած ոչըրուլի պէս.
Թօդ վըրէթ լալօվ պըտուտ գամ, վարթ կօրցըրած բուլըուլի պէս.
Դուն ինձ շուտօվ մի կօրցընի, շավարդէն, բազայ իս, աղիզ:

Յօդուածիս վիրջում աւելորդ չեմ համարում մէջ բերել իր-
քե նմուշ և վրացերէն մի երգ: Այս երգի գանազան նախագատու-
թիւնները կոտր-կտոր իրքն առածներ, ասացուածներ դեռ մինչև
հիմա գործ են ածում վրացիք առանց վիտենալու, որ գրանք ոչ
թէ վրացի ժողովրդի սրամութեան արգասիք են, այլ մի հայ
աշուղի ժողովրդականացած էկոպրօմա:

Այս ստանաւորը շատ լաւ բնորոշում է ժամանակի ոպին
—բարքերի և գասակարգերի յարաբերութեանց պարզութիւ-
նը և մանաւանդ ճորտ բանաստեղծի ազատ, յանդուկն ոպին¹⁾:

Երգին կցած է Օհանի հետեհալ ծանօթութիւնը, ոչց որշնօ-
ևն նեանց նաշյամ ոցոյոտ նացալուտօտ լունժըց: Նաշնօնցք ոցլացնօ
նցըահնեցնցըցըց զարմանց նացնոնցըցըց զարաւությունուան: Շցընշնոր-
շու ոչց մուշելցնցըց իրնա բյուռաւ: (Այս թէնիսի եղանակով յօրի-
նածը այսպէս ասած հայքոյեանք է, Սայեաթ-Նովան թէլաւում
կռւել է երջանկայիշատակ վախտանդ արքայազնի (Հերակլ Ա-ի
որդին) հետ: Իրբն մի անմիտ (անզգոյշ) մարդ՝ այսուեզ և եթ
ասել է արքայազնի զիմաց այս ստանաւորը 1751 թւականին):

1) Սայեաթ-Նովան իր վրացերէն ստանաւորներից մէկի մէջ
տառմ է.

Ցը ցլցիօ ցահ, տագըռնա ահ մոնճ:

(Աս ասմիկ եմ, իշխան լինել չեմ ուզում)

Սայեաթ-Նովայի նորաւոթեան մասին վկայում է և Օհանը
մի ծանօթութեան մէջ: Տեսունոցք նօտրցո նյօն ցան անոնցին,
ծահուտանուա (Սայեաթ-Նովային Դիօրդի թագաւորի (նր նա զեռ
թագաւուանդ էր) նորս են անուանում. ճշմարիտ է):

Նղյան հոգուն ցանձոնին ցանցոց լոյզու
մըլքարի վերոլուտ հոգուն շմբա աղջկուն!
Հարի հաս դապացին յցուցունուս յանցւա,
տցցուն թևուս վլամիւնուս յիշունա դաօիշյուն!

Տցցուն տցցուն դապացու, ա՞ն դաօպացունցին.
Պղիտ ինուս դանցւա հատ շմբաւ ցանցին.
յցուն մատինս ալացս ա՞ն դաօկունցին,
հացուն պարուն և ածանչուս նաօիշյուն.

Հացուն ցատցունու և նոլունցին տասու,
և նոլունցին ցուտու ցըմիւնու ատասու,
յույն ա՞ն մունցին և նոլունցին դասու,
տցցուն ովհուս ծցէցւնու ցանցյուն.

Նոցնոցու յայսու ց՛միցու թշիւ,
ց՛միցու նանցին լմիրուման դաղուն.
յուցիւ ա՞ն ցանցցու նոհային թշիւ,
հացուն թալլա և անցիւլնու նորիցուն.

Յև նոյ ուրպա և նոնցունու ցոնս ցանի!
անձանա ցոյու և ուրպաու նոնս ցանի!
և առատնոց միյոան, առատնու ցանի!
և ուրպան ցանցու, լամ յեշուն դաօիշյուն.

«Ի՞նչոպէս կարող է առազի փայլը ցամաքեցնել ծովը. միթէ կարելի է մազի մէջ թուրը կշռել. ինչ կարող է վնասել քամին քար ու կրի ժայռին, թէկուզ տարիներով փչել շարունակի:

«Չուկը, թէկուզ նրան մորթես, չի զառալ. իշխն իշխն է պէտք տոքին հինա. առազը չի կարող բամբակի տեղը բռնել, թէկուզ դութնի վիրմակը նրանով լցնես:

«Ի՞նչքան կուզես սպիտակեցրու. պղնձի թասը—պղնձի մէկին արծաթը հազար արժէ, Հասարակ առակուն չեն տալ պղնձի զինը, թէկուզ նրան ոսկէ մատանու մէջ հապցնես:

«Կան մարդիկ, որոնք աշխատում են ստանայի օգտին. սա-

տանայի շինածը թող Աստուած աւերի: Դգումը չի կարող դառնալ
Շիրաքի վարունկի, թէկուզ նրան բարձր թարեքի վրա տեղա-
ւորեն:

«Իու մի կարծիք, որ ևս մի չնշին սականդար եմ. ևս զրապէտ
մարդ եմ, իշխում եմ խօսքին: Ինձ Սայեաթ-Նովա կասեն, Արու-
թինն եմ—խօսք կասեմ, որ ամսերը զոռալ ակսենտ:



Անձ այս մահապահ պատճենու է բարձր սկզբան
մեջ վառել և գույք ուն անու ուն պահ և պահա-
ւութեան մեջ խօսքական բարձր մասնաւու ու առա-
յանք է մաս և մաս ուն ի անձուն պահ բարձր սկզբան
բարձր մասն պահ պահապահ բարձր է պահ պահ մաս
մասն պահապահ պահ պահապահ պահ պահ պահ պահ պահ
պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ
պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ պահ